

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿԱԶՄԱԿԵՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿԱՅԻՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-215-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4-րդ պարբերությունում «կազմակերպությունների և» բառերից հետո լրացնել «հաշվառված» բառը,

2) 5-րդ պարբերությունում «կազմակերպությունների և» բառերից հետո լրացնել «հաշվառված» բառը և հանել «հարկային մարմնում հաշվառման կանգնելիս» բառերը,

3) լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝

«հարկ վճարողի հարկային գործ՝ հարկային մարմնի կողմից վարվող յուրաքանչյուր հարկ վճարողի անհատական թղթապանակ, որում անփոփոխ էն հարկ վճարողից ստացված, նրան վերաբերող հարկային մարմնի կողմից ստեղծված, ինչպես նաև երրորդ անձանցից ստացված բոլոր փաստաթղթերը՝ սկսած հիմնադիր փաստաթղթերից մինչև հարկ վճարողի լուծարումը (գործունեության դադարեցումը) հարկային հաշվառումից հանումը հավաստող փաստաթղթերը»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հարկ վճարողների հաշվառման համարների տրամադրումը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, նոտարների, դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցում ստացած կազմակերպությունների, իրականացվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցում ստացած կազմակերպությունների հարկ վճարողների հաշվառման համարների տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Հարկ վճարողի հաշվառման համարը հանդիսանում է նրա նույնականացման կոդը:

Պետական գրանցում ստացող կազմակերպություններին և հաշվառվող անհատ ձեռնարկատերերին հարկ վճարողների հաշվառման համարների տրամադրման նպատակով Հայաստանի Հանրապետության հարկային մարմինը գրանցող (հաշվառող) մարմնին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրում է իր ավտոմատացված կառավարման համակարգում տվյալների բազայից առցանց ռեժիմով օգտվելու թույլտվություն:

Օրենքով սահմանված բոլոր փաստաթղթերն ստանալուց և ավտոմատացված տվյալների բազա մուտքագրելուց հետո համակարգչային ծրագրի միջոցով անմիջապես հարկ վճարողին տրամադրվում է հաշվառման համար:

Պետական գրանցում ստացած կազմակերպությունների և հաշվառված անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման մասին տեղեկությունները պետական գրանցման (հաշվառման) օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարության սահմանած կարգով տրամադրվում են հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային մարմնին:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցում ստացած կազմակերպությունների պետական գրանցման մասին տեղեկությունները պետական գրանցման օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում են հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային մարմնին ՀՀ կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ սահմանած կարգով:»:

2) 7-րդ մասում «պետական գրանցում ստանալու և հարկային մարմնում հաշվառման կանգնելու» բառերը փոխարինել «հաշվառվելու» բառով,

3) 9-րդ մասում «կնիքի» բառից հետո լրացնել «(դրա առկայության դեպքում)» բառերով:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 1-ին, 2-րդ 3-րդ և 5-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել:

2) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Պետական գրանցում ստացած կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք հաշվառվում են իրենց տարածքի հարկային մարմնում (տեսչությունում)՝ ըստ իրենց գտնվելու վայրի կամ ըստ իրենց բնակության վայրի:»:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀՈՂՎԱԾ 8. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք հարկային մարմնում հաշվառման կանգնելու և հարկ վճարողի հաշվառման համար ստանալու համար հարկային մարմին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) անձնագրի և սոցիալական քարտի պատճենները (առկայության դեպքում), բացակայության դեպքում սոցիալական քարտի

բացակայության վերաբերյալ լիազորված մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի պատճենը,

2) ֆիզիկական անձի կողմից լրացված՝ հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրման դիմում:

2. ՀՎՀՀ-ի տրամադրման դիմումի ձևը և դրանում լրացման ենթակա տվյալների ցանկը սահմանում է կառավարությունը:»:

ՀՈՂՎԱԾ 5. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀՈՂՎԱԾ 9. ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Կազմակերպությունների պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, նոտարների, դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցում ստացած կազմակերպությունների հաշվառման ժամանակ պահանջվող տվյալների փոփոխության դեպքում հարկ վճարողը պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել իրենց սպասարկող հարկային մարմնին՝ մինչև փոփոխությունների տեղի ունենալուն հաջորդող ամսվա 20-ը:»:

ՀՈՂՎԱԾ 6. Օրենքի 10-րդ՝

1) հոդվածի 1-ին մասից հանել «կազմակերպություններին և» բառերը,

2) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով՝

«5. Հարկային մարմինը հարկային հաշվառման վերցված յուրաքանչյուր հարկ վճարողի համար վարում է հարկային գործ: Հարկային գործում ընդգրկվող փաստաթղթերի ցանկը, հարկային գործերի վարման, օգտագործման և պահպանության կարգը հաստատվում է վերադաս հարկային մարմնի ղեկավարի կողմից:»:

ՀՈՂՎԱԾ 7. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «կազմակերպության կամ» և «այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ» բառերը:

ՀՈՂՎԱԾ 8. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Օրենքով սահմանված կարգով գրանցում ստացած կազմակերպությունները լուծարման (հաշվառված անհատ ձեռնարկատերերը՝ գործունեության դադարեցման) համար ներկայացնում են դիմում պետական ռեգիստրի մարմին, իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցված կազմակերպությունները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:»:

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Հարկ վճարողի կողմից լուծարային հաշվարկները և հաշվետվություններն ստանալուց հետո հարկային մարմինը ՀՀ օրենքին համապատասխան իրականացնում է լուծարային ստուգում:»:

ՀՈՂՎԱԾ 9. Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 13. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հարկային գործերը վարող հարկային մարմինն ապահովում է հարկային գործերի պահպանությունը հետագա օգտագործման նպատակով:

2. Հարկային գործերը պահպանվում են հարկային մարմնում 5 տարի ժամկետով, ապա օրենքով սահմանված կարգով ենթարկվում փորձաքննությամբ արժեքավորման, բացառությամբ հարկ վճարողների հիմնադիր փաստաթղթերի և չկատարված հարկային պարտավորությունները հավաստող փաստաթղթերի, որոնք փորձաքննությամբ արժեքավորման ենթակա են միայն հարկ վճարողի լուծարումից (գործունեության դադարեցումից) 5 տարի հետո:»:

ՀՈՂՎԱԾ 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում 1-ին ընթերցման ժամանակ ներկայացված
առաջարկությունների

NN	Առաջարկող	Առաջարկության բովանդակություն	Նշում առաջարկի ընդունման մասին
1	ՀՀ ԱԺ պատգամավոր Վ. Բոստանջյան	Խմբագրել օրենքի նախագծի հոդված 2-րդի 1-ին մասի 4-րդ պարբերությունը	Ընդունվել է, ավելացվել է «ՀՀ կառավարության սահմանած կարգով» բառերը
2	ՀՀ ԱԺ պատգամավոր Ա. Հովհաննիսյան	1) Խմբագրել օրենքի նախագծի հոդված 2-րդի 1-ին մասի 3-րդ պարբերությունում՝ «համակարգչային ծրագրի կողմից տրամադրվում է հարկ վճարողի հաշվառման համար» բառերը, 2) Խմբագրել օրենքի 3-րդ հոդվածը, 3) Խմբագրել օրենքի 4-րդ հոդվածը, 4) Խմբագրել օրենքի 6-րդ հոդվածը, 5) Խմբագրել օրենքի 7-րդ հոդվածը,	1) Ընդունվել է, « համակարգչային ծրագրի կողմից տրամադրվում է հարկ վճարողի հաշվառման համար» բառերը փոխարինվել են «համակարգչային ծրագրի միջոցով անմիջապես հարկ վճարողին տրամադրվում է հաշվառման համար» 2) Ընդունվել է 3) Ընդունվել է 4) Ընդունվել է 5) Ընդունվել է
3	ՀՀ ԱԺ պատգամավորներ Ա. Նռանյան Ա. Մինասյան	1) Օրենքի նախագծի հոդված 8-րդի 2-րդ կետում «հարկային մարմինը կարող է կատարել լուծարային ստուգում» ձևակերպումը խմբագրել ՀՀ գործող օրենսդրության համապատասխան 2) ՀՀ կենտրոնական բանկում գրանցվող կազմակերպությունների նկատմամբ ևս կիրառել ՀՎՀՀ ստանալու լիազոր մարմիններում հաշվառման կանգնելու միևնույն եղանակը, այսինքն Կենտրոնական բանկում	1) Ընդունվել է, խմբագրվել է հետևյալ կերպ՝ «հարկային մարմինը ՀՀ օրենքին համապատասխան իրականացնում է լուծարային ստուգում:» 2) Ընդունվել է, կատարվել են փոփոխություններ օրենքի նախագծի՝ 1) 2-րդ հոդված, 1-ին կետում 2) 4-րդ հոդվածում

		գրանցվող կազմակերպությունների գրանցում ստանալու պահին նույնպես ստանում են ՀՎՀՀ, ինչպես նաև համարվում հաշվառված հարկային և սոցիալական ապահովության լիազոր մարմիններում:	
4	ՀՀ ԱԺ պատգամավոր Լ. Ալավերդյան	«Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի հոդված 2-րդի 1-ին մասի 2-րդ պարբերությունում «առ-գիծ» բառը փոխարինել այլ օրենքներում կիրառվող համապատասխան բառով	Ընդունվել է, «առ-գիծ» բառը փոխարինվել է «առցանց» բառով
5	ՀՀ կառավարություն	Հաշվի առնելով, որ օրենքի ընդունմամբ պայմանավորված անհրաժեշտ է ընդունել տեղեկատվության փոխանակման հարցերը կարգավորող իրավական ակտեր և մի շարք գործող իրավական ակտերում կատարել փոփոխություններ, ինչպես նաև ծրագրային ապահովման խնդիրները լուծել, առաջարկվել է օրենքի ուժի մեջ մտնելը հետաձգել երեք ամսով՝ 01.04.2011թ:	Ընդունվել է